




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԿ(Բ) Կ ԿՆՆՑԿՈՍԻ ԲԱՆԳԵԼՁ ԲԱԺՆԵ

2850

ԲԱՏՐԱԿՈՒՅԻՆՆԵՐԻ ՑԵՎ ԳԵՂՋԿՈՒՅԻՆՆԵՐԻ ՄԵԶ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱՏԱՐԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3K04
P.33

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1929



3K04
F-33
պր.

23310-46

2001

1929 թ. ՀՈԿՑ. 2—Ի ԲԱՆԳԵԳՋԱՐԱԺՎԱՐՆԵՐԻ ՅԵՎ
ՀՐԱՀԱՆԳՉՈՒՀԻՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԽՈՐՀՐԳԱՑՈՒ-
ԹՅԱՆՆ ԲՆԿ. Ե. ԽԱՆՋՅԱՆԻ ԱՐՏԱՆՆԵԱԺ ՃԱՌԸ

Բանվորուհիների և գեղջկուհիների մեջ կա-
տարվելիք աշխատանքը կուսակցութեան ծափա-
լած մասսայական աշխատանքների անբաժան
մի մասն է: Մենք չենք կարող կանանց առան-
ձին կազմակերպութիւններ ստեղծել, բաժանել
նրանց պրոլետարական դասակարգից, ինչպես
այդ անում են բուրժուական լերիւրներում: Սա-
կայն, հաշվի առնելով պատմական մի շարք ա-
ռանձնահատկութիւններ՝ կանանց համեմատա-
կան հետամնացութիւնը, անկուրտութեանու-
թիւնը և, վերջապես, կենցաղային մի շարք
պայմաններ, վերոնցում գտնվում է աշխատա-
վոր կինը, կուսակցութիւնն ստիպված է և ան-
հրաժեշտ է համարում հատուկ ուշադրու-
թիւն դարձնել կանանց մեջ կատարվող
աշխատանքների վրա: Այդ տեսակետից ել
մենք պետք է մտաենանք հարցին ու աշխա-
տանքների այնպիսի նոր ձևեր մշակենք, վոր-

2010



4737-53

Հրատ. № 1124

ՊԵՇԱՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՁԵՐԿԱՆՈՒՄ

Գրառեց. № 2868(բ)

Տիրութ 15,000

Գատ. 1126

պեսզի ապահովենք աշխատավոր կնոջ մասնակցութիւնը մեր սոցիալիստական շինարարութեան բոլոր ասպարեզներում:

Մենք այժմ ասլորում ենք մեր տնտեսութեան վերակառուցման շրջանը, յերբ արդեն մեր առաջ ծառացած են մի շարք դժվարին և լուրջ խնդիրներ, վորոնք պահանջում են ուժերի հսկայական լարում: Կուսակցութիւնը գլխավորում է հսկայական ու մասսայական մի շարժում. որեցոր բացվում են նորանոր գործարաններ, և մեր 5-ամյա պլանի համաձայն, մեր արդյունաբերութեան մեջ մենք պետք է հեղափոխութիւն առաջ բերենք: Դրա հետ միասին մենք պետք է հսկայական աշխատանք կատարենք նաև գյուղում: Տնտեսութեան կապիտալիստական սեկտորը գյուղում դեռ ավելի ուժեղ է, քան քաղաքում: Այդ իսկ պատճառով կուսակցութիւնը խնդիր է դրել՝ արժատախիլ անել կապիտալիզմը և ցիրուցան անհատական մեր տնտեսութիւնները համախմբելով՝ գիտական-տեխնիկական հիմունքներով կազմակերպել սոցիալիստական խոշոր տնտեսութիւններ:

Դասակարգային թշնամին պարավաժ է, բայց դեռ չի վոչնչացված և զանազան միջոցների յեդիմու՝ խանգարելու մեր սոցիալիստական շինարարութիւնը: Կուսակցութիւնը և մեր մաս-

սայական բոլոր կազմակերպութիւններն իրենց աշխատանքների մեջ նոր ձևեր և նոր բովանդակութիւն պիտի մտցնեն: Հին ձևերով ալեւ չի կարելի աշխատել: Դասակարգային թշնամին ակտիվացել է, և մենք ավելի պետք է զարկ տանք բանվորական աշխատավորական մասսաների քաղաքական ակտիվացմանը:

Այսպիսով մեր բանգդջաթիւնները նույնպէս իրենց աշխատանքների մեջ պետք է նոր ձևեր մտցնեն:

Չավազանց փաստակար պետք է համարել այն կղզիացած դրութիւնը, վոր նկատվում է բանգդջաթիւնների աշխատանքների մեջ, յերբ նրանք մեծ մասամբ զբաղվում են միայն պատժողութիւնների աշխատանքներով, իսկ բոլոր բանվորուհիների ու գեղջկուհիների մեջ կատարվող աշխատանքը դեռ լայն, կանոնավոր հիմքերի վրա չի դրված: Մենք դնում ենք ձեր առաջ այդ կղզիացած դրութեան դեմ պայքարելու խնդիրը, և դուք պետք է աշխատեք բոլոր բանվորուհիներին ու գեղջկուհիներին մասնակից անել մեր տնտեսական, պրոֆեսիոնալ և այլ աշխատանքներին:

Բանվորների թիվն արդյունաբերութեան մեջ գնալով ավելանում է: Մենք պետք է աշխատենք բանվորուհիների կողք ևս պատրաստել

ու մեր արդյունաբերութեան մեջ բանվորուհի-
ները տոկոսը բարձրացնելու Առանց դրան հնա-
րավոր չէ կանանց գործին մասնակցութիւնը
մեր յերկրի ինդուստրիացման աշխատանքներին:
Ճիշտ է, բանվորուհիները մեր արդյունաբերու-
թեան մեջ, որինակ՝ Լենինականի տեքստիլ գոր-
ծարանում, զգալի տոկոս են կազմում, սակայն
նրանց գործնական մասնակցութիւնը մեր ար-
տադրական հանձնաժողովների և արտադրողա-
կանութեան բարձրացման աշխատանքներին՝ դեռ
անբավարար է: Բանգեղջրաժինները պետք է
ծավալեն իրենց աշխատանքներն այդ ուղղու-
թեամբ՝ աշխատելով վերացնել լեզած թերու-
թիւնները: Մենք պետք է աշխատենք հետա-
գայում ավելի զարգացնել մեր տնայնագործու-
թիւնը, վերը հնարավորութիւն կա մեզ ա-
վելի մեծ թվով աշխատավորուհիների աշխա-
տանք տալ և բարելավել նրանց տնտեսական ու
կենցաղային պայմանները:

Ժողովրդական սննդի կազմակերպման հար-
ցը բանգեղջրաժինների ուղադրութիւնից չպի-
տի վրիպի, վորովհետեւ սննդի գործը լավ կազ-
մակերպելով՝ մենք նույնպէս ոգնած կլինենք
բանվորուհիների կենցաղային պայմանների լա-
վացմանը:

Պետք է ոգնել և աշակցել կոոպերացիային,

թեկուզ հենց հացի կամ այլ մթերքների բաշխ-
ման ու հերթի վերացման գործում. այդ մասին
Կենտկոմը հատուկ վորոշում ունի: Մենք դեռ
չունենք բավարար թվով մանկապարտեզներ,
մսուրներ և աշխատավորուհու կենցաղն ու կյան-
քը բարելավող այլ հիմնարկներ: Սակայն այստեղ
չպետք է մեր հույսերն ամբողջովին պետական
միջոցների վրա դնենք, այլ պետք է աշխատենք
ոգտագործել հասարակական լայն միջոցները,
ինչպէս մենք այդ արեցինք անցյալ տարի՝ ան-
գրագիտութեան վերացման ֆրոնտում: Մեր
բանգեղջրաժինները շատ բան են արել, սակայն
անկուտուրականութեան դեմ, և առաջին հեր-
թին՝ անգրագիտութեան վերացման ասպարիզում
քիչ բան են արել: Առաջիկայում ամենամեծ
ուշադրութիւնը պետք է դարձնել այդ խնդրի
վրա:

Կուսակցութիւնն առանձին ուշադրութիւն
է դարձնում գյուղի աշխատանքների վրա: Կոլ-
տնտեսային շինարարութեան ասպարիզում մենք
զգալի նվաճումներ ունենք: Բայց կուլակները
վոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում մեր
կոլտնտեսութիւնները քաջբայելու համար, վորի
հետեանքով մեր գեղջկուհիներից շատերը բա-
ցարական դիրք են բռնում դեպի կոլտնտեսու-
թիւնները: Այդ հարցը պետք է ուսումնասիրել

և տեսական մասսայական աշխատանք տանել՝ գեղջկուհիներին հասկացնելու և կուտնտեսությունների շարժման մեջ գրավելու համար:

Կուտնտեսություններն ել իրենց հերթին պետք է աշխատեն գեղջկուհու կենցաղի ու կյանքի պայմանները լավացնող հիմնարկներ բաց անել, վորպեսզի կուտնտեսություն մտնող գեղջկուհին տեսնի ու համոզվի, վոր իր կյանքի համար նոր ել է բացվում, շնորհիվ կուլեկտիվ տնտեսության:

Կանանց առաջըաշման մասին Կենտկոմը հատուկ վորոշում ունի, և այդ ուղղությամբ մենք վորոշ քայլեր արել ենք: Միքանի կոմիսսարիատներում կանայք ղեկավարող աշխատանք են կատարում: Իհարկե, դա դեռ քիչ է. առաջըաշումները մենք պետք է շարունակենք: Վորոշ տեղերում կանանց առաջըաշման հարցում նկատվում է վախկոտություն, վորի դեմ պետք է պայքարել: Բանգեղջրաժինները պետք է հետևեն, վոր առաջ քաշված բանվորուհիներն ու գեղջկուհիները չկարվեն կանանց մեջ տարվող աշխատանքներին: Նրանց միջոցով է, վոր պետք է խորացնել աշխատանքն աշխատավորուհիների շրջանում:

Բանգեղջրաժինների աշխատանքներում հատուկ տեղ պիտի գրավի ազգային փոքրամաս-

նությունների մեջ տարվող աշխատանքը: Այստեղ մեզ ամենագլխավոր անելիքը պետք է լինի՝ պայքարել չաղբայի և կենցաղային ալյանգալությունների վերացման համար:

Կուսակցությունը հրահանգել է ակտիվ բանվորուհիներին ու գեղջկուհիներին կուսակցության շարքերը գրավել, սակայն այդ գործը տեղներում դանդաղ է ընթանում: Դա բացատրվում է նրանով, վոր այդ ուղղությամբ տեղերում նախապատրաստական աշխատանք չի տարվում: Բանգեղջրաժիններն անպայման այս հարցով պետք է ղեկավարեն. հենց այս տարվա կուսդատարակչական ցանցում պետք է աշխատել ավելի մեծ թվով բանվորուհիներ ու գեղջկուհիներ ընդգրկել: Իսկ այս բոլոր աշխատանքները մեր բանգեղջրաժինները կկարողանան կատարել միայն այն դեպքում, յերբ նրանք չեն կղզիանա, այլ միշտ ամուր կապված կլինեն կուսակցության ընդհանուր աշխատանքին ու պայքարին:

ԲԱՆՎՈՐՈՒՇԻՆԵՐԻ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՇԻՆԵՐԻ ՄԵՋ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԼԵՐ-
ՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Համ Կ (բ) Կ Կենտկամի 1929 թ. հունիսի 15-ի վորոշումը)

1. Ժողովրդական տնտեսության վերակառուցման ներկա շրջանում, յերբ առանձնապես սուր բնույթով է դրված բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության լայն մասսաների ամբողջ կորովը հնգամյա պլանի կատարման, յերկրի պաշտպանունակության բարձրացման և բյուրոկրատիզմի դեմ պայքար մղելու գործում մոբիլիզացման յենթարկելու հարցը, — աշխատավոր կանանց լայն մասսաները ևս սոցիալիստական շինարարության աշխատանքներին մասնակից դարձնելու խնդիրն առաջնակարգ նշանակություն է ստանում:

Բանվորուհիների և գեղջկուհիների լայն մասսաների հարաճուն ակտիվությունը, վոր առավել ցայտունություն բերեալ յենթարկելու հոլդերների վերընտրության կամպանիայի ժամանակ, դեռևս ծայրաստիճան անբավարար Հափերով է մոբիլիզացման յենթարկվում և կազմա-

կերպչորեն ամբապնդվում՝ կուսակցության և խորհուրդների առաջ կանգնած բոլոր հերթական խնդիրների (ինքնարժեքի իջեցման, գործալքության դեմ պայքարելու, աշխատանքի արտադրողականության բարձրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակազմության, բերքատվության բարելավման և այլն) լուծման մեջ գործնական մասնակցություն բերելու ուղղությամբ, վորպիսի հանգամանքը դասակարգային պայքարի սրման ներկա պայմաններում յերբեմն հեշտացնում է կապիտալիստական տարրերի կողմից աշխատավոր կանանց ամենից ավելի հետաձուսաց խավերը կուսակցության և խորհուրդների դեմ պայքարի դուրս բերելու նպատակով կատարվող աշխատանքը:

Դա պահանջում է, վոր կուսակցությունն ու բանգեղջրաժինները հանդես բերեն խիստ լարված մի աշխատանք՝ կապելով այդ աշխատանքի բոլոր ձևերն ու մեթոդները (պատժողովներ, խմբակներ, ակումբներ և այլն) բանվորուհիների, բաարակուհիների և գեղջկուհիների լայն մասսաների աճող ակտիվությունը կուսակցության և խորհուրդների առաջ կանգնած բոլոր խնդիրների լուծման մեջ պրակտիկ մասնակցություն բերելու գործում մոբիլիզացման յենթարկելու և գործնականորեն կազմակերպե-

լու աշխատանքներին, վորպէսզի գրանով ավելի ևս ակտիվացրած ու նախապատրաստած լինեն այս մասսաները:

2. Բանգեղջբաժինները՝ վերականգնման շրջանի խնդիրները պտտվել են գլխավորապես աշխատավոր կանանց ամենից ավելի հետամնաց խավերի կուլտուրական մակարդակը վորոշ չափով բարձրացնելու աշխատանքի շուրջ (կուսակցութեան ընդունելութեան, խորհուրդների և պրոֆեսիոնալ կազմակերպութիւնների ընտրութեան ասպարիզում): Այդ աշխատանքի պրոցեսում աճած ակտիվը ձուլվել է ընդհանուր ակտիվի հետ: Բանգեղջբաժինները չեն զբաղվել այդ ակտիվի նախապատրաստման, հաշվառման և առաջընթացի հատուկ աշխատանքներով և չեն հենվել նրա վրա՝ բանվորուհիների և գեղջկուհիների մեջ իրենց ազդեցութեան շրջանակներն ընդարձակելու ընթացքում:

Նրա հետևանքով ել ստացվել է այն, վոր միանգամայն անբավարար չափերով է առաջ քաշված յեղել կանանց ակտիվը ղեկավար աշխատանքների համար, վորպիսի հանգամանքն անհամապատասխան է յեղել կանանց ամբողջ մասսայի կուլտուրական մակարդակի բարձրացմանն ու ակտիվութեան աճմանը (հարյուր հազարավոր բանվորուհիներ ու գեղջկուհիներ խոր-

հուրդներ ի անդամ են, տասնյակ հազարավորներ խորհրդային ղեկավար աշխատանքի վրա, ելի տասնյակ հազարավորներ կուսակցութեան անդամ և կուսակցական աշխատավոր): Այդ խզումն առանձնապէս յերեան յեկավ՝ ղեկավար աշխատանքի համար կանանց ավելի մեծ չափերով առաջ քաշելու մասին կենտկոմի կողմից տված հրահանգը կիրառելիս:

Իր ամբողջ լայնութեամբ դրված չի յեղել բանվորուհու և հասարակական աշխատավոր գեղջկուհու կենցաղային ազատագրման աշխատանքի հարմարեցման խնդիրը: Հիմնականում կենցաղային ձեռնարկումներն սպասարկել են արտագրութեան մեջ աշխատող բանվորուհու կարիքներին՝ նրանց արտագրական աշխատանքի ընթացքում:

Ժողովրդական տնտեսութեան վերակառուցման ներկա շրջանում, յերբ առանձին ուժգնութեամբ կուսակցութեան առաջ ծառանում է կադրերի և նրանց ճիշտ բաշխման ու նախապատրաստման հարցը, բանվորուհու և գեղջկուհու վճռական ու մասսայական առաջընթացը կարևորագույն խնդիր է դառնում: Հետևաբար, կուսակցական կոմիտեների բանգեղջ- և կազմ-բաշխբաժինները շատ ավելի մեծ ուշադրութիւն պետք է դարձնեն կանանց կադրերի հաշ-

վառման, նախապատրաստման և առաջնաշման աշխատանքներին, քան մինչև հիմա:

3. Կանանց աշխատավոր մասսաների մեջ կատարելիք աշխատանքի ասպարիզում կուսակցութեան առաջ դրված խնդիրները պահանջում են, վոր բանգեղջրաժինները մաքսիմալ չափերով ոգտագործեն խորհրդային, կոոպերատիվ, արհմիութենական, տնտեսական և հասարակական կազմակերպություններում աշխատող կանանց ամբողջ ակտիվը, հենվեն նրա վրա հերթական խնդիրների (աշխատանքային, կենցաղային և կուլտուրական) մշակման ընթացքում և լծեն նրան այդ հարցերը համապատասխան կազմակերպություններում ու հիմնարկներում դնելու և նրանց ընթացք տալու աշխատանքներին:

Այս ակտիվի վրա ավելի մեծ չափերով հենվել կարողանալու համար պահանջվում է, վոր բանգեղջրաժիններն աշխատանքը կազմակերպելիս լավ ուսումնասիրեն նրան և կապվեն զանազան հիմնարկությունների կազմը աշխատանքին՝ նպատակ ունենալով ազդել կոմմունիստ կանանց աշխատանքի լծելու և նրանցից լավագույններին ինքնուրույն ղեկավար աշխատանքի համար առաջ քաշելու խնդիրներին վրա: Նրա հետ միասին խորհուրդները, պրոֆ-

միությունները, կոոպերացիան և տնտեսական մարմինները միջոցներ պետք է ձեռք առնեն տվյալ կազմակերպություններում աշխատող կին-ակտիվի վորակավորումը բարձրացնելու համար և այդ նպատակով ընդհանուր և հատուկ կուրսեր ու խմբակներ կազմակերպեն:

4. Արդյունաբերական բանվորուհիների ազդեցութեան ուժեղացումն աշխատավոր կանանց լայն մասսաների վրա, բանվորուհիների ակտիվութեան աճումը և նրանց դասակարգալին ինքնագիտակցութեան ու կուլտուրական մակարդակի բարձրացումը պահանջում են ել ավելի շատացնել կանանց աշխատանքը արտադրութեան մեջ: Ժողովրդական տնտեսութեան հնգամյա պլանն ապահովում է արդյունաբերութեան վիթխարի աճումը շնորհիվ վերակառուցման և սոցիալիստական ռացիոնալացման: Սոցիալիստական այս ռացիոնալացումը բանվորական ուժի շահագործման վրա հիմնված կապիտալիստական ռացիոնալացումից տարբերվում է նաև նրանով, վոր հնարավորութիւն է տալիս ընդլայնել արտադրութեան, ըստ վորում նաև ծանր արտադրութեան մեջ կիրառվող կանանց աշխատանքը, առանց մայրութեան ֆունկցիաներին մնալ պատճառելու: Այդ կապակցութեամբ կենտրոնական կոմլտեն գտնում է անհրաժեշտ, վոր համա-

պատասխան խորհրդային և հասարակական կազմակերպությունները (Պետպլանը, Աշխտոդկոմատը, Ժողովրդական Տնտեսություն Գերագույն խորհուրդը և պրոֆմիությունները) ապահովեն կանանց բանվորական ուժը արդյունաբերություն բոլոր ճյուղերում ներգրավելու մասին հնգամյակում նախատեսված ծրագրի կենսագործումը (նրա հետ հարմարեցնելով նաև այդ ուժի նախապատրաստման պլանը) և կանանց թվի անշեղ աճումը վորակավորյալ բանվորական ուժի նախապատրաստման բոլոր ողակներում (ֆաբրիկաներում, Աշխատանքի Կենտրոնական Ինստիտուտում, իրիկնային կուրսերում, բարձրագույն տեխնիկական ուսումնական հիմնարկներում):

Կանանց բանվորական ուժի կիրառման պլանն անցկացնելիս Կենտրոնական Կոմիտեն առաջարկում է յեղակետ ընդունել հետևյալ դրույթները:

ա) Ավելացնել կանանց աշխատանքի կիրառումը ծանր արդյունաբերության և հատկապես մեխանիկական ցեխերի ու մեքենագործության մեջ, ինչպես նաև այն ճյուղերում, ուր անբավարար չափով է կիրառվում այդ աշխատանքը, բայց ուր նա լիովին արդարացնում է իրեն (փայտամշակման, կաշեգործության և այլ ճյուղերում):

բ) Հաստատուն գիծ անցկացնել բանվորահիների ստորերկրյա աշխատանքն արգելելու, բայց միաժամանակ դրաի աշխատանքն ավելացնելու ուղղությամբ:

գ) Մաքսիմալ չափերով իրացնել կանանց աշխատանքը կարուճեի, սննդի և համի, թրդթագործական, տեքստիլ և քիմիական արդյունաբերության մեջ:

դ) Մաքսիմալ չափերով ընդլայնել կանանց աշխատանքն առևտրական ու խորհրդային ապարատներում և տրանսպորտում (կոնդուկտոր, առաջնորդ, շոֆեր և այլն):

ե) Ընդլայնել գյուղատնտեսական բանվորահիների և բատրակուհիների մշտական աշխատանքը խորհրդային տնտեսություններում և պլանտացիաներում:

5. Գյուղի աշխատավոր կանանց մասսաներում կուսակցության կատարելիք աշխատանքի հիմնական մասը պետք է կազմի՝ կոլլեկտիվացման, մասսայական կոոպերացիան և բերքատվության բարձրացման միջոցով գյուղատնտեսության դրույթները բարելավելու համար գեղջկուհիների և բատրակուհիների ակտիվությունը մոբիլիզացման լենթարկելու խնդիրը:

Անհրաժեշտ է վճռական բեկում առաջացնել գեղջկուհիների մասսաներում կատարելիք



աշխատանքի մեջ կողքեկտրվացման և արտադրական կոոպերացման հարցերի շուրջ պրոպագանդն ու ժեղացնելու, խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունների և միջգյուղային տրակտորային կայանների շուրջ այդ աշխատանքը կազմակերպելու, այդ բնագավառում ցուցադրական կողմն ավելի լայն չափերով կիրառելու (որինակ՝ լավագույն կոլեկտիվ ու խորհրդային տնտեսություններում երսկուրսիաներ կազմակերպելու), գեղջկուհիների մեջ սխտեմատիկ կերպով ազդոպրոպագանդ մղելու (գյուղատնտեսական խմբակների, կուլսերի և մամուլի միջոցով) և ամբողջ բացատրական աշխատանքը սոցիալիստական վերակազմության ու գյուղատնտեսության բարձրացման գործնական աշխատանքներին շաղկապելու ուղղությունը:

Առանձին նշանակություն է ստանում գեղջկուհիներին գյուղատնտեսական կոոպերացիայի շինարարության աշխատանքներին լծելու խնդիրը, քանի վոր գյուղատնտեսության մի շարք ճյուղերում կանանց աշխատանքը գերակշռող է հանդիսանում:

Կենտրոնական կոմիտեն հատկապես ընդգծում է այն հանգամանքը, վոր գեղջկուհիներին ակտիվացնելու և կազմակերպելու ուղղությունը ծավալված աշխատանքի չափերից և կա-

խում ունենալու նշանակալից չափով գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում կուսակցության կողմից կատարվող աշխատանքների հաջողությունը:

Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը՝ կենտրոնական կոմիտեն առաջարկում է.

ա) Գյուղատնտեսական կոոպերացիայի Միությունների Միության ֆրակցիային՝ միջոցներ ձեռք առնել ավելի վճռական կերպով գեղջկուհիներին, առաջին հերթին չքավոր և բատրակ գեղջկուհիներին կոոպերացիայի և կոլեկտիվ տնտեսությունների մեջներգրավելու համար, առանձնապես ուշադրության առարկա դարձնելով գյուղատնտեսական կոոպերացիայի այն սխտեմները, վորոնք կանանց ընդգրկման տեսակետից ավելի յետ են մնում (ինչպես հացահատիկային, այգե-բանջարաբուծական և անասնաբուծական սխտեմները), և չքավորության կոոպերացման ֆոնդերից չքավոր և բատրակ գեղջկուհիներին կոլեկտիվ տնտեսությունների ու կոոպերատիվ աշխատանքի մեջ ներգրավելու համար միջոցներ հատկացնելով:

բ) Կոլտնտեսությունների Համամիութենական Խորհրդին՝ կարգավորել կոլտնտեսություններում տղամարդկանց և կանանց աշխատանքի վարձատրման հավասարեցման հարցը

(իհարկե, յեթե նրանք հավասարաչափ աշխատանք են կատարում):

գ) Դաշնակից հանրապետութիւնների Առ-
ժողկոմատներին՝ վոր գեղջկուհիների կենցաղա-
յին սպասարկման ասպարիզում անհրաժեշտ ե
շարունակել մանկական մսուրների և ծննդկան-
ների մահճակալների շատացման աշխատանքը,
դրա համար լայն չափերով ոգտագործելով վոչ
միայն խորհուրդների և կոոպերացիայի միջոցնե-
րը, այլև ազգաբնակչութան ինքնագործունե-
յությունը (ինքնահարկումը): Կենցաղային սպա-
սարկման ծանրության կենտրոնը փոխադրել
գյուղատնտեսության սոցիալիստական հատվա-
ծում (կոմմունաներում, արտելներում, տրակ-
տորային կայաններում, խորհրդային տնտեսու-
թյուններում), հաշվի առնելով այն հանգամանքը,
վոր կենցաղի հասարակայնացման աստիճանից ե
կախված մեծ մասամբ կոլտնտեսութիւնների
կայունութիւնն ու հետագա ամրապնդումը:

դ) Կենտրոնական Կոմիտեն արհրաժեշտ ե
գտնում, վոր խորհրդային տնտեսութիւնների և
պլանտացիաների մանկական հիմնարկներին նյու-
թական հիմունքներ ընձեռելու համար դաշնա-
կից հանրապետութիւնների հողժողկոմատները
մշակեն այդ նպատակով հատուկ միջոցներ մաս-
նատրելու հարցը:

ե) Գյուղատնտեսական բանկի և Միու-
թյունների Միության ֆրակցիաներին՝ մշակել
խոշոր կոլտնտեսութիւնների հասարակական հիմ-
նարկների սարքավորման համար վարկային ֆոն-
դեր կազմակերպելու հարցը:

զ) Բանգեղջրաժիններին՝ իբրև կանոն՝
կազմակերպել կոլլեկտիվ ու խորհրդային տըն-
տեսութիւններում պատգամավորական ժողով-
ներ, հարմարեցնելով նրանց ծրագրային ու
գործնական աշխատանքներն այդ տնտեսութիւն-
ների տնտեսական կազմակերպման և այնտեղ
աշխատող կանանց կենցաղային սպասարկման
հիմնական խնդրին:

6. Բանվորուհիների կենցաղին վերաբերյալ
հարցերում անհրաժեշտ ե համաձայնեցնել այդ
աշխատանքի զարգացման տեմպը սոցիալիստա-
կան շինարարության ընդհանուր տեմպի հետ,
այնպես կազմակերպելով կենցաղային ամբողջ
աշխատանքը, վոր նա համապատասխան լինի
բանվորուհիներին մասսայաբար սոցիալիստական
շինարարության մեջ ներգրավելու գործին և,
ինչքան կարելի չե, մեծ չափերով սպասարկի
ակտիվի աճող պահանջներին: Դա պահանջում ե,
վոր խորհուրդները, կոոպերացիայի բոլոր սիս-
տեմները և մանավանդ պրոֆմիութիւններն ու-
ժեղացնեն իրենց ուշադրութիւնը աշխատավոր

կանանց կենցաղային սպասարկման վրա, ավելի մեծ չափերով կիրառեն պետական, պրոֆմիտ-թենական և կոոպերատիվ միջոցներն այդ գործի վրա և ավելի լայն չափերով կապեն աշխատավորներին գործունեությունը մասսայական հիմնարկների, ճաշարանների և լիցքարանների շինարարության գործին: Այդ կապակցությամբ՝ կենտրոնական կոմիտեն գտնում է անհրաժեշտ հետևյալ ձեռնարկումները.

ա) Առժողկոմատները, լուսժողկոմատները, համարհմիտրհի ֆրակցիաները և կոոպերացիայի բոլոր սիստեմների ֆրակցիաները յերեք ամսվա ընթացքում պետք է մշակեն այնպիսի մի սխեմ, վոր բոլոր կենցաղային հիմնարկները հարմարեցվեն (մուլերները, մանկապարտեզները) ակտիվիստ աշխատավորուհիների սպասարկմանը՝ վերջիններին աշխատանքի ժամանակ:

բ) Համարհմիտրհի և ԽՍՀՄ ժողտնտեսության Գերագույն Խորհրդի ֆրակցիաները պետք է ապահովեն աշխատավարձի ֆոնդի մեկ չորրորդային և կենցաղային բարելավման ֆոնդի $5-10\%$ -ային որենքով նախատեսված հատկացումների կիրառումը, ինչպես նաև մշակեն այն հարցը, թե ինչպիսի հնարավորություններ գոյություն ունեն այդ որենքը բոլոր հիմնարկությունների վրա տարածելու համար, անկախ այդ

հիմնարկություններում զբաղված կանանց բանավորական ուժից:

գ) Համարհմիտրհի ֆրակցիաները պետք է մշակեն նախադպրոցական հիմնարկների կազմակերպման համար կենցաղի բարելավման ֆոնդերի միջոցներից տոկոսներ հատկացնելու հարցը:

դ) Սպառողական և բնակարանային կոոպերացիայի ֆրակցիաները պետք է մշակեն կենցաղային հիմնարկների (մուլերների, մանկապարտեզների, լիցքարանների) կազմակերպման համար վաստակից և շրջանառությունից հատկացվող միջոցների տոկոսն ավելացնելու հարցը:

ե) Առժողկոմատները նոր բյուջետային տարվա սկզբին միջոցներ պետք է ձեռք առնեն մուլերների մանուկների վրա յեղած ծախսերը նվազեցնելու և այդ հաշվին մուլերների տարողությունը մեծացնելու համար:

7. Կանանց աշխատավորական մասսաների ակտիվության այն վիթխարի աճումը, վոր յերևան յեկավ խորհուրդների վերընտրության ժամանակ և առաջին անգամ խորհրդային շինարարության լծված հարյուր հազարավոր բանվորուհիների, գեղջիկուհիների և բատրակուհիների ներգրավումը խորհուրդներում՝ կուսակցության, բանգեղջրածինների և խորհուրդների առաջ դրնում են խոշոր քաղաքական կարևորություն

ներկայացնող մի խնդիր, ահա ե՛րբուր խորհուրդ-
ների բոլոր կին-անդամներին գործնական աշխա-
տանքի ամբողջելու, պետութեան կառավարման
գործը սովորեցնելու և նրանց ամենորոյա գործ-
նական աշխատանքը սիստեմատիկ կերպով զեկա-
վարելու խնդիրը: Այս խնդիրներն առանձնապես
սուր բնույթ են ստանում գլուղխորհրդի նա-
խագահ բարակուսներին նկատմամբ, վորոնց
թիվն այս տարվա վերջնորական կամպանիայի
ժամանակ 1 տոկոսից բարձրացավ մինչև 7
տոկոս:

ա) Այս կապակցութեամբ՝ կենտրոնական
կոմիտեն առաջարկում է, վոր Միութենական
կենտրոնական ֆրակցիան ապահովի կանանց
խորհրդային ակտիվի, առաջին հերթին գլուղների
և ավանների խորհուրդներին նախագահների նա-
խապատրաստման համար կենտրոնական և տե-
ղական կուրսեր կազմակերպելու խնդիրը, իսկ
յերկրային կոմիտեները, մարդային կոմիտեներ-
ը և ազգային կոմկուսակցութունների կենտ-
կոմներն իրենցից կախած բոլոր միջոցները
ձեռք առնեն խորհուրդների կին-անդամների
համար կարճատև կուրս-խորհրդակցութուններ
անցկացնելու ուղղութեամբ:

բ) Կանանց՝ խորհուրդների գործնական աշ-
խատանքներին լծելու խնդիրը սեկցիոն աշխա-

տանքների միջոցով է, վոր կարող է ամենից
ավելի բարենաջող լուծում ստանալ: Դրա հա-
մար ել անհրաժեշտ է կազմակերպել գլուղական
և քաղաքային խորհուրդներին կից կուլտուր-
կենցաղային սեկցիաներ, վորոնք ամենից ավելի
մատչելի չեն բանվորուհիներին և գեղջկուհիներին
շնորհիվ իրենց աշխատանքի բնույթի:

գ) Աչքի առաջ ունենալով այն հանգաման-
քը, վոր խորհրդի անդամ կանանց անգրագի-
տութիւնը, վորպիսին հասկապես խոշոր չափե-
րի չէ հասած Արևելքում, հսկայական խոչընդոտ
է հանգիստանում նրանց աշխատանքի մեջ, դաշ-
նակից հանրապետութիւնների լուստողկոմատ-
ները մեկ ամսվա ընթացքում միջոցներ պետք է
մշակեն հատուկ դպրոցների և անհատական ու
խմբական ուսուցման միջոցով վերացնելու խոր-
հուրդների կին-անդամների անգրագիտութիւնը:

Դ. Խորհուրդների կին-անդամների քաղա-
քական ու կուլտուրական մակարդակը բարձրաց-
նելու և աշխատանքի ընթացքում նրանց գործ-
նական աշակցութուն ցույց տալու համար ա-
ռաջարկել, վոր բանգեղջրաժինները լաջն չափե-
րով ոգտագործեն կանանց համար հրատարակ-
վող մասսայական քաղաքական ժուրնայները՝
ձգտելով նրանց բաժանորդ դարձնել խորհուրդ-
ների բոլոր գրագետ անդամներին:

ե) Կուսակազմակերպությունները խորհուրդների անդամ-բաժնեակերպի և չքավոր կանանց պետք է ներգրավեն չքավորական խմբերի աշխատանքների մեջ և աջակցեն խորհրդի անդամ գեղջկուհիներին նրանց աշխատանքի ընթացքում:

զ) Կենտրոնական Կոմիտեն առաջարկում է, վոր Միութենական Կենտրոնական Ֆրակցիան ցուցմունքներ տա տեղական խորհուրդներին ուժեղացնելու համար հրահանգները այն խորհուրդների նկատմամբ, վորոնց կազմում կանայք շատ կան և հատկապես նրանց, վորոնց գլխավորում են բանվորուհիները և գեղջկուհիները, գյուղերի և ավանների խորհուրդներին և շրջագործկոմների նախագահներին վերադաս որգանների առաջ գեկուցման բերելու ձևը գործադրելով:

8. Կենտրոնական Կոմիտեն նշում է այն ծայրաստիճան անվճարականութունը, վորպիսին լերևան են բերել տեղական կուսակազմակերպությունները կանանց ղեկավար աշխատանքների առաջնայման գործում, իսկ առանձին դեպքերում նաև միջանի կուսակազմակերպությունների և անհատ կուսակցականների մոտ նկատված անշարժությունը:

Բյուրոյի ատիղմի դեմ պայքարելու մասին XVI կուսկոնֆերանսի կողմից առաջադրված խնդիրներն առանձին նշանակութուն են տալիս

բանվորուհիներին, բաժնեակուհիներին և գեղջկուհիներին թե ղեկավար աշխատանքների համար և թե խորհրդային, պրոֆմիութենական, կոոպերատիվ ու տնտեսական ապարատների բոլոր ողակներում առաջ քաշելու հարցերին: Այդ աշխատանքը դեռևս լերկար ժամանակ թե ամբողջ կուսկոմիտեների և թե բանգեղջբաժինների ուղղորդության առարկան պետք է դառնա: Կուսակցական կոմիտեներն անդուլ կերպով պետք է ստուգեն այն աշխատանքը, վոր կատարում են արտակուսակցական կազմակերպությունների ֆրակցիաները կանանց առաջ քաշելու և հանձնարարված գործի կատարման ընթացքում այդ առաջ քաշվածներին աջակցութուն ցույց տալու խնդիրներում:

Կենտրոնական Կոմիտեն հատկապես ընդգծում է, վոր առաջ քաշված կանանց աշխատանքի հաջողութունը շատ բանում պայմանավորվելու չե նրանով, թե ինչ չափով են նրանք կապվելու բանվորական և գյուղացիական լայն ժառանգների հետ, անդրադարձնելու նրանց հարցերն իրենց գործնական աշխատանքներում և բարձրացնելու իրենց վորակավորումը:

9. Տնայած նրան, վոր ղեկավար աշխատանքի համար բանվորուհիներին և գեղջկուհիներին առաջ քաշելու ուղղությամբ ձեռք առնը-

ված միջոցների կիրառմանը խոշոր արգելակ ե հանդիսանում նրանց տեսական և գործնական անբավարար պատրաստութունը, այնուամենայնիվ տեղական կուսկազմակերպութիւնները և, մասնավորապէս, բանգեղջբաժինները չափազանց թույլ ուշադրութիւն են դարձնում կին-ակտիվի ուսման հարցերին:

Հետագայում անհրաժեշտ է, վոր բանգեղջբաժիններն ակտիվ կերպով մասնակցելով բանվորուհիների, բանվորների աղջիկներին և բաւրակ ու չքավոր գեղջկուհիներին տեխնիկումներին, բանֆակներին, համալսարաններին և բարձրագույն տեխնոլոգիական ուսումնական հիմնարկների համար նախապատրաստելու աշխատանքներում, զրանով ապահոված լինեն այն տոկոսը, վորպիսին ունենալու յեն կանայք համապատասխան հիմնարկութիւններում համաձայն կենտրոնական կոմիտեի վորոշման:

Բանգեղջբաժինները, Ագիտ-պրոպ և Մամուլի բաժինները և պրոֆմիութիւնների ֆրակցիաները լուրջ ուշադրութիւն պետք է դարձնեն բանվորուհիներին, բաւրակուհիներին և գեղջկուհիներին զանազան ուսումնական հիմնարկներում, վորոնց թվում նաեւ կոմսոլնիստական ԲՈւՀ-երում ուսման ուղարկելու համար նաւորութիւն կատարելու աշխատանքների վրա:

Այս ընկերներին նախապատրաստելու հնարավորութիւն աւլու համար Լուսժողկոմատի և պրոֆմիութիւնների ուժերով պետք է կազմակերպել հատուկ խմբակներ, կուրսեր և խմբական ու անհատական ստուգում, ազատել կուսակցական և հասարակական բեռնվածութիւնից, ամեն կերպ թեթեւցնել կենցաղային պայմանները և նրանց յերեխաներին հերթից դուրս ու, յեթե հնարավոր է, նաեւ ամբողջ որով, մրսուրներում և մանկապարտեզներում տեղավորել:

10. Մեծ նշանակութիւն աւլով անգրագիտութիւն վերացման համար աշխատողների կադրեր ստեղծելու խնդրին և նկատի ունենալով այն հանգամանքը, վոր ցարդ դեռեւ բանվորուհիներից, բաւրակուհիներից և գեղջկուհիներից այդպիսիք համարչա թե գոյութիւն չունեն, չնայած վոր նրանք ավելի լավ կկարողանան հաշվի առնել աշխատավոր կանանց մասսաների կարիքներն ու մակարդակը և զրանով ապահովել ամենից ավելի հաջող մի պալքար անգրագիտութիւն դեմ, — կենտրոնական կոմիտեն անհրաժեշտ է համարում, վոր դաշնակից հանրապետութիւնների լուսժողկոմատներն առաջիկա ուսումնական տարուց սկսած անցնեն մարզային և յերկրային կենտրոններում բանվորուհի-

ների, բանվորի աղջիկների, բառարկուհիների և գեղջկուհիների համար անգրագիտության վերացման աշխատավորների հատուկ դպրոցներ կազմակերպելու աշխատանքին:

11. Կուսակցության և բանվորուհիների ու գեղջկուհիների լայն մասսաների կապակցման ամենից ավելի ստուգված ձևը և էին-ակտիվի նախապատրաստման գործնական շկոյա հանդիսացող պատգամավորական ժողովների աշխատանքը մաքսիմալ չափերով պետք է հարմարեցվի բանվորուհիների և գեղջկուհիների աճող ակտիվության մոբիլիզացման և կազմակերպչական ամրապնդման հիմնական խնդրին:

Այս կապակցությամբ՝ խոշոր նշանակութուն է ստանում պատգամավորական ժողովները վերընտրության կամպանիան, վորը պիտի աշակցի կուսակցությանը՝ մոբիլիզացման լենթարկելու բանվորուհիների և գեղջկուհիների լայն մասսաները սոցիալիստական շինարարության հերթական խնդիրների շուրջ, գրասևրել կանանց մասսաների քաղաքական տրամադրութունները և հաշվի առնել այն գործնական հարցերը, վորպիսիք բարձրացնում են այդ մասսաները կուսակցության և պետության առաջ: Իրականում, սակայն, թերագնահատվում է պատգամավորական ժողովների այս վերընտրական

կամպանիայի քաղաքական նշանակութունը: Շատ թույլ է այս աշխատանքում խորհրդային, պրոֆսիութենական ու կոոպերատիվ կազմակերպությունների ֆրակցիաների, ինչպես նաև մամուլի մասնակցութունը:

Բանգեղջրաժինները պատգամավորական ժողովների աշխատանքի ծանրության կենտրոնը պիտի փոխադրեն պատգամավորուհիների գործնական աշխատանքի վրա, ձգտելով, վոր ձեռնարկությունների ներսում պատգամավորուհիներն առաջին զարկ տվողները լինեն սոցիալիստական մրցութուն կազմակերպելու և անցկացնելու գործում, կուսակցության ոգնականները՝ ինքնարժեքի իշեցման համար և գործալքման ու պարանքափշացման դեմ պայքարելու խնդրում մասսաներին մոբիլիզացման լենթարկելիս: Գյուղում պատգամավորուհիները պետք է առաջին զարկ տվողները լինեն՝ գյուղացիական տնտեսությունը սոցիալիստական սկզբունքներով վերակազմելու ձեռնարկումների կիրառման և բերքատվության բարձրացման ու կենցաղի բարելավման համար պայքարելու գործում: Այս կապակցությամբ՝ համապատասխան կերպով պետք է կրճատվի պատգամավորական ժողովի ծրագիրը և հիմնականում հարմարեցվի գործնական աշխատանքներին: Գյուղում անպայման պետք է

մատչանել ազդրոմինիմումի մշակումը: Պատգամավորական ժողովների վերընտրությանը քաղաքական բնույթ պետք է տրվի: Բոլոր այն դեպքերում, յերբ ընտրություններն անց են կենում առանց մասսաների հարկ յեղած մոբիլիզացիան, ապա այդ ընտրություններն իշիք պետք է հայտարարվին:

12. Խորհրդային Արևելքի աշխատավոր կանանց ակտիվության այն վիթխարի աճումը, վորպիսին յերևան յեկավ խորհուրդների վերընտրության ժամանակ, դասակարգային պայքարի սրման և կանանց հետամնաց մասսաներն իրենց ազդեցության յենթարկելու ուղղությամբ հոգեվորականների ու բեկերի կողմից հանդես բերված հարածուն ձգտումների պայմաններում, — առանձին ուժգնությամբ է դնում խորհրդային Արևելքի աշխատավոր կանանց աճող ակտիվությունն ամրապնդելու, նրանց դասակարգայնորեն դաստիարակելու և այդ ակտիվությունը խորհուրդների, պրոֆմիությունների ու կոոպերացիայի գծով գործնական հոռնի մեջ դնելու հարցը: Ուստի աշխատանքի ձևերն ու մեթոդները պետք է հարմարեցվին այս խնդիրներին յուժմանը:

Խորհրդային Արևելքի կանանց մասսաների գրեթե հարյուր տոկոսով անզրազիտու-

թյունը և կանանց մեջ աշխատող ստորին կարերի փակ կյանքն ու ծայրաստիճան թուլությունն առանձին դեպքերում հանգում են զուտ վարչական մեթոդների կիրառմանն ու դասակարգային գծի խեղաթյուրմանը:

Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը, կենտրոնական Կոմիտեն դնում է հետևյալ սուղ շարկները.

ա) Ազգային կոմկուսակցությունների և յերկրային կոմիտեների կենսկոմները պետք է ուժեղացնեն ստորին կուսկասմակերպությունների ղեկավարությունն ու հրահանգումը կանանց մեջ կատարելիք նրանց աշխատանքի ընթացքում, ապա նաև այդ աշխատանքի դասակարգային գծի հստակությունն ու վարչականության վերացումը: Հատուկ ուշադրության առարկա դարձնել բանվորուհիներից, բատրակ ու չքավոր աշխատավորներից ստորին կին-աշխատավորներ վերցնելու և նրանց նախապատրաստելու խնդիրը, այդ նպատակի համար հատուկ կուրսեր կազմակերպելով:

բ) Անհրաժեշտ է, վոր դաշնակից հանրապետությունների լուսժողկոմատները միջոցներ ձեռք առնեն ընդլայնելու կանանց լիկկայանների (առաջին հերթին խորհրդի կին-անդամների) և տեխնիկոմների ու դպրոցների ցանցը,

Բատրակուհիների մեջ տար. — 2

ապա նաև աշխատանք ծավալել մյուս աղղու-
թյունների կին ներկայացուցիչներին տեխնի-
կոմները, ԲՈԼՀ-երը մտնելու համար նախապատ-
րաստելու ուղղութիւնը:

13. Հոկտեմբերյան հեղափոխութեանն ակ-
տիվ կերպով մասնակցած և խորհուրդներին,
պրոֆմիութենական ու կոոպերատիվ գործնական
աշխատանքներում փորձ ձեռք բերած պրոլետար
կանանց նշանակալից կադրերը կուսակցութեան
շարքերի լրացման խոշոր պահեստի ուժն են
հանդիսանում: Բայց և այնպես քաղաքական-
դաստիարակչական աշխատանքի թուլութեան հե-
տևանքով՝ պրոլետար կանանց խավը միանգա-
մայն անբավարար չափերով են ներգրավվում կու-
սակցութեան մեջ:

Դրա հետ միասին, բանվորուհիների առաջ-
քաշումը ղեկավար աշխատանքների համար
(բլիշների, ռալկոմների, շրջկոմների քարտուղա-
րութեան պաշտոնի), վորը խոշոր նշանակու-
թյուն ունի պրոլետար կանանց կուսակցութեան
մեջ ներգրավելու ուղղութիւնը կատարելիք աշ-
խատանքում, դեռ մինչև այսօր ել ծալրահեղ ան-
վճռականութեամբ և միանգամայն անբավարար
չափերով են տեղի ունենում:

Կենտրոնական Կոմիտեն առանձնապէս ընդ-
գծում է այն հանգամանքը, վոր բանվորուհիներն

երին կուսակցութեան մեջ ներգրավելու ուղղու-
թեամբ կատարելիք աշխատանքը հատկապէս կա-
րևոր նշանակութիւնն է ստանում ներկա շրջա-
նում, լերբ կուսակցութեան առաջ դրված է հըն-
գամյա պլանի գործնական կատարման և սոցիա-
լիստական շինարարութեան աճման դժվարու-
թյունների հաղթահարման նպատակով աշխա-
տավորութեան, վոր թվում նաև կանանց ամե-
նալաֆն մասսաները մօբիլիզացման լենթարկե-
լու խնդիրը:

Դրա հետ միասին, Կենտրոնական Կոմիտեն
նշում է, վոր դասակարգային պայքարի սրման
պայմաններում սոցիալիստական վերակառուց-
ման ճանապարհին հանդիպած դժվարութիւն-
ները պահանջում են, վոր բոլոր կուսկազմակեր-
պություններն ամենալուրջ աշխատանք ծավա-
լեն կոմմունիստ կանանց բալլընիկական վոգով
դաստիարակելու և նախապատրաստելու ուղղու-
թեամբ, վորպեսզի վերջիններս կարողանան զի-
տակցաբար ընդդիմադրել կուսակցութեան գլխա-
վոր բալլընիկական գծի ամեն տեսակ տատա-
նումներին:

ԲԱՆԱԶԵՎ

Լսելով ընկ. Խանջյանի գեկուցումը բան-
վորուհիների ու գեղջկուհիների մեջ կուսակցու-
թյան կատարելիք հերթական խնդիրների մասին՝
բանգեղջբաժինների աշխատավորների հանրապե-
տական խորհրդակցությունը նշում է Հայաստա-
նի աշխատավորուհիների աճող ակտիվությունը,
ներանց մասնակցությունը խորհուրդների, կո-
ոպերացիայի, պրոֆեսսիոնալ և այլ հասարակա-
կան կազմակերպությունների մեջ, նրանց վորոշ
ներգրավումը արտադրության և կոլեկտիվ տըն-
տեսությունների մեջ, գյուղխորհուրդների կազ-
մակերպչական ամրապնդումը, ուժեղ ներգրա-
վումը տնայնագործական կոոպերացիայի մեջ,
աշխատավոր կանանց (մետաքսագործական, տե-
քստիլ, պահածոների և այլ արտադրական ճյու-
ղերի) գործնական մասնակցությունը ինքնարժե-
քի իշեցման և աշխատանքային գիտելիքներին
բարձրացման գործում:

Այս նվաճումների կողքին կան նաև թերու-
թյուններ, ինչպիսին են՝

1. Բանգեղջբաժինների աշխատանքի վո-
րոշ փակվածություն, գյուղխորհուրդների աշխա-
տանքի քարացած մեթոդներ, ակտիվի հաստա-
տուն հաշվառման և ուսումնասիրման բացակա-
յություն, էին աշխատավորների վորակյալ կադ-
րերի բացակայություն, կանանց աշխատանքի
թույլ ներգրավումն արտադրության մեջ և վորա-
կավորումը, չքավոր և միջակ գեղջկուհիների
անբավարար ներգրավումը կոոպերացիայի և կոլ-
տնտեսությունների մեջ, աշխատավոր կանանց
կուլտուր-կենցաղային կարիքների թույլ սպա-
սարկություն, անբավարար աշխատանք խորհր-
դի անդամների նկատմամբ, կանանց անբավարար
առաջընթացն ինքնուրույն ղեկավար աշխատան-
քի բնագավառներում, ուսման ուղարկված կա-
նանց անբավարար տոկոս, անգրագետների խո-
շոր տոկոս, ազգային փոքրամասնությունների
(թուրք, քուրդ, ռուս և այլն) կանանց մեջ կա-
տարված աշխատանքի թուլություն, բանվորու-
հիների և բարձրակուհիների չափազանց թույլ
ներգրավումը կուսակցության մեջ, կուսկազմա-
կերպությունների և կուսամարմինների անբավա-
րար ղեկավարություն բանգեղջբաժինների նը-
կատմամբ և բանվորուհիների ու գեղջկուհիների
ուշադրության անբավարար մոբիլիզացումը կու-
սակցության հերթական խնդիրների շուրջ:

Սորհրդակցութիւնն անհրաժեշտ է համա-
մարում վճռական բեկում առաջ բերել բանգեղջ-
բաժինների աշխատանքում՝ կանանց լայն մաս-
սաները կուսակցութեան հերթական խնդիրների
շուրջ մոբիլիզացման յենթարկելու ուղղութեամբ
և, հիմնվելով դասակարգային հոսանքի վրա՝
անցնել աշխատանքի նոր մեթոդների, վորի հա-
մար առաջարկում է.

1. Ամենակարճ ժամանակում գլուղխոր-
հուրդների վերընտրութիւնների հետ զուգըն-
թացաբար ակտիվի հաշվառում և ուսումնասիրու-
թիւն կատարել, նպատակ ունենալով ընդլայնել
այն հիմունքը, վորի վրա կատարվում է բան-
վորուհիների և գեղջկուհիների մեջ կատարվելիք
աշխատանքը:

2. Լուրջ ուշադրութեան առարկա դարձնել
կին-աշխատավորների նախապատրաստութեան
խնդիրը, այդ նպատակի համար ավելի յերկարա-
տե կուրսեր բացելով և ավելի ուժեղ կադրեր
առաջ քաշելով:

3. Հնգամյա պլանի հիման վրա ուսումնա-
սիրել մեր ներկա արդյունաբերութիւնը և նրա
զարգացման հեռանկարները՝ կանանց մասնա-
ներն արտադրութեան մեջ ներգրավելու համար
(Ալլահվերդիում, Ղափանում, Տեքստիլտորգում,
պահածոների և բամբակի արտադրութեան մեջ,

Պեմզայում և այլն): Աշխտողկոմատի և կանանց
կենցաղի բարելավման հանձնաժողովի տրամա-
դրութեան տակ յեղած գործադրութեան ֆոնդի
գումարներից հատկացնել կանանց բանվորական
ուժի վորակավորման գործին:

4. Կոլխոզկենտրոնը և ամեն տիպի կոոպե-
րացիայի ֆրակցիաները բանգեղջբաժինների հետ
միասին Ձ ամսվա ընթացքում պետք է կոնկրետ
միջոցներ մշակեն բանվորուհիներին և բատրակ,
չքավոր, ու միշակ գեղջկուհիներին կոոպերացի-
այի և կոլտնտեսութիւնների մեջ ներգրավելու
համար:

5. Աշխատավոր կանանց կուլտուր-կենցա-
ղային կարիքներին ավելի մեծ չափերով սպա-
սարկելու նպատակով՝ Համկոմկուսի կողմից հաս-
տատված բոլոր հատկացումները կենտրոնացնել
կանանց կենցաղի բարելավման հանձնաժողով-
ներում և ամենակարճ ժամանակում մշակել նը-
րանց իրացման պլանը: Ուժեղացնել Կենտգործ-
կումին ու գավգործկոմներին կից կանանց կեն-
ցաղի բարելավման հանձնաժողովների և խոր-
հուրդների կենցաղային սեկցիաների աշխա-
տանքը:

6. Գլուղխորհուրդների կին անդամների նը-
կատմամբ կատարվող աշխատանքը դարձնել ա-
վելի սխտեմատիկ, Կենտգործկումի և գավգործ-

կոմիտեի հետ միասին միջոցներ ձեռք առնել կուրսեր և խորհրդակցություններ կազմակերպելու համար, զեկուցման կանչելու մեթոդը գործադրել և հակապես ուշադրություն դարձնել անգրագիտության վերացման և հրահանգման ուժեղացման վրա:

7. Ավելի վճռական կերպով անցնել բանվորուհիներին և գեղջկուհիներին պլանային հաշվառման, ուսումնասիրության ուղեկավար աշխատանքի առաջնական խնդիրներին:

8. Նախապատրաստել բանվորուհիներին և գեղջկուհիներին համապատասխան պահեստի կադրեր՝ առաջիկա տարում նրանց ուսման ուղարկելու համար և այդ նպատակով նրանց նախապատրաստական կուրսերում, քաղաքացիներում և այլ տիպի հիմնարկներում ներգրավելով:

9. Առաջին հերթին վերացնել հասարակական աշխատանքների մեջ քաշված կանանց անգրագիտությունը, ամեն կերպ աջակցելով անգրագիտության վերացման արժանապատիվ կոմիտեներին և այդ աշխատանքը սերտ կերպով կապելով խրճիթ-ընթերցարանների աշխատանքին:

10. Գյուղխորհուրդների վերջնատրության առաջիկա կամպանիայի ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել թուրք, քուրդ և ուրա կանանց մեջ կատարվող աշխատանքին, հատուկ

պատգամավորական պոևնկտեր կազմակերպելով և կենցաղային մնացորդների դեմ (չաղբայի և այլն) պայքարն ուժեղացնելով: Այդ նպատակի համար տրամադրել համապատասխան աշխատավորներ:

11. Բոլոր բանգեղջբաժինները մոտիկ ապագայում պետք է ուսումնասիրության յենթարկեն կին-աշխիվը և բանվորուհիներին, բարակ ու չքավոր գեղջկուհիներին ու կոլխոզ աշխատավորներին կուսակցության մեջ ներգրավեն:

12. Բոլոր շրջկոմները, ոսկոմները և մանավանդ բջիջները, համաձայն աշխատանքի նոր մեթոդների, պետք է ուժեղացնեն իրենց ղեկավարությունը բանվորուհիների և գեղջկուհիների մեջ կատարվող աշխատանքների նկատմամբ:

13. Բանվորուհիների և գեղջկուհիների մեջ կատարվելիք աշխատանքի հարցերը պարբերաբար լուսաբանել մամուլում:

ՔԱՆԱՁԵՎ

1. Ինդուստրիացման և գյուղի սոցիալիստական վերակազմության միջոցով մեր լեռները սոցիալիստական վերակառուցման լենթարկելու խնդիրը հրամայական պահանջ է դնում մեր առաջ՝ բանվորուհիների և գեղջկուհիների լայն մասսաները սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու և նրանց աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար, վորպիսի հանգամանքն իրագործելի կդառնա մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացնելու և հատկապես նրանց այբբենական անգրագիտությունը վերացնելու դեպքում:

2. Այս տեսակետից՝ հինգ տարվա ընթացքում անգրագիտությունն իսպառ վերացնելու մասին կուսակցության և կառավարության բարձր մարմինների հանած վորոշումների իրագործումը բոլոր բանգեղջբաժինների, պատգամավորական ժողովների, կոմսոլիստների և բանվորուհիների ու գեղջկուհիների ակտիվի առաջ կանգնեցնում են մի ամբողջ շարք խիստ կարևոր և

անհեռաձգելի խնդիրներ, վորոնց բարեհաջող կատարումից է կախված կուլտուրական զարգացման հնգամյա պլանի իրագործումը:

3. Հայաստանում անգրագիտության վերացման խնդիրն ըստ ելուծյան կանանց անգրագիտության վերացման խնդիր է հանդիսանում: Բավական է նշել, վոր Հայաստանի 215,000 չափահաս կանանց 63% ը, այսինքն 135,000 հոգի անգրագիտ են: Այդքան հոգու անգրագիտությունը վերացնելու համար անհրաժեշտ է, վոր անգրագիտության դեմ պայքարող բոլոր կազմակերպությունների կոնկրետ պլաններում կանանց ընդգրկման տեկտսը լինի վոչ պակաս, քան 63—67:

4. Յուրաքանչյուր բանգեղջբաժին կոնկրետ պլանային առաջադրություն ստանալուց անմիջապես հետո Անգրագիտության վերացման Արտակարգ Հանձնաժողովի հետ միասին պիտի մշակի մանրամասն կատարման պլան, առաջադրությունը բաժանելով ըստ գյուղերի, տեղկոմների և տվյալ ռայոնում մտնող քաղաքների:

Անմիջապես խիստ հաշվառման պետք է լենթարկել բոլոր այն կին-ակտիվիստներին, վորոնք կարող են ոգտագործվել լիկկայաններում:

5. Բանգեղջբաժիններն ամենալայն ագիտացիոն աշխատանք պետք է ծավալեն ագա-

մարդկանց ու կանանց մեջ լիկկայանների նշանակութիւնը նկատմամբ, ժողովրդականացնեն կուլտուրական զարգացման հնգամյա պլանը, բոլոր գրագետ և անգրագետ կանանց ներգրավեն «Կորչի անգրագիտութիւնը» ընկերութիւններում և նրանց այլ կազմակերպութիւնների տկտիվ անդամները դարձնեն: Պետք է բացատրել նրանց այն վիթխարի խնդիրը, վորպիսին դրել է պետութիւնը «Կորչի անգրագիտութիւնը» ընկերութիւնների վրա (1929/30 տարում լիկկայաններում ընդգրկելիք 60,000 հոգուց 31 հազարն այս ընկերութիւններին է հասնում): Ագիտացիայից անմիջապէս հետո պետք է սկսել գրագետների և կիսագրագետների հավաքագրման և նրանց դպրոցների կոմպլեկտացման աշխատանքը:

6. Խորհրդային հասարակայնութեան բոլոր ուժերը — ուսուցչութիւնը, կուսակցութիւնը, կոմյերիտմիութիւնը — պետք է ներգրավվեն կանանց անգրագիտութեան դեմ մղվող պայքարում: Բանգեղջբաժինները «Կորչի անգրագիտութիւնը» ընկերութիւնների և անգրագիտութեան վերացման արտակարգ հանձնաժողովների միջոցով պետք է կազմակերպեն լիկկայանների դասատուների, կին-ակտիվիստների, լիկկայաններ կազմակերպողների, սովորողների, դպրո

ցականների, յերեխաների և լիկկայան հաճախող կանանց պարզեւտրման գործը, առաջադրելով նրանց թեկնածութիւնը Մոսկվա, Բագու, Թիֆլիս և այլ քաղաքներ եքսկուրսիա գնալու համար և գրքերով ու թոշակով պարգևատրելով նրանց:

7. Բանգեղջբաժինների և կին-աշխատավորների ամենագլխավոր պարտականութիւնն է հանդիսանում ոգնութիւն ցույց տալ այն կանանց, վորոնց կենցաղային պայմաններն արգելում են դպրոցներ հաճախել: Այդպիսիների համար կոոպերատիւների, «Կորչի անգրագիտութիւնը» ընկերութիւնների և պատգամավորական ժողովների միջոցով պետք է կազմակերպվեն մասուրներ, ժամանակավոր մասուրներ և խաղասենյակներ յերեխաների համար՝ նրանց մայրերի աշխատանքի ժամանակ: Այդպիսիներ ստեղծել հատկապէս կոլլեկտիվ ու խորհրդային տնտեսութիւններում և նման այլ ձեռնարկութիւններում:

8. Դրանից բացի, կանանց լիկկայանների լավագույն ձևերից մեկն է հանդիսանում անգրագիտութեան խմբական և անհատական վերացման մեթոդի կիրառումը: Բոլոր այն տեղերում, ուր կանաթ լվիճակի չեն դպրոց հաճախել, տներին կից պետք է կազմակերպել 3-ից

իմնչև 5, նույնիսկ մինչև 10 հոգուց բաղկացած խմբեր և նրանց ուսուցիչներ արամադրելու և նրան չափերով դործադրել տնից դուրս գալ չկարողացող անտեսուհիների և մայրերի անհատական ուսուցման մեթոդը: Այդպիսիներին պետք է տրամադրել ուսուցիչներ, դպրոցների բարձր խմբերի աշակերտ-աշակերտուհիներ և այլն:

9. Բոլոր այն տեղերում, ուր կենցաղային պայմաններն արգելք են հանդիսանում կանանց՝ տղամարդկանց հետ միասին դպրոց հաճախելու, պետք է կազմակերպվեն կանանց հատուկ կուրսեր:

10. Առանձին ուղադրության առարկա պետք է դառնան ազգային փոքրամասնությունների կանանց լիկկայանները: Ամենավճռական միջոցներ պետք է ձեռք առնվեն թրքուհիների ու թրքուհիների համար անգրագիտության վերացման աշխատավորուհիներ նախապատրաստելու ուղղությամբ, այլապես անհնար է լիկկայանների հնգամյա պլանի կատարումը:

11. Անհրաժեշտ է բոլոր միջոցները ձեռք առնել խիստ հսկողություն սահմանելու համար դպրոցների զստակարգային կազմի և կանանց կանոնավոր հաճախման խնդիրների վրա, միաժամանակ պայքարելով ուսուցիչների անկասկած հաճախման դեմ:

12. Ուժեղացնել այս ուսուցիչների վրա դրված պարտականությունների հասարակայնացումը: Լիկկայանների կազմակերպման լավագույն ձևերից մեկը պետք է համարել՝ առանձին դպրոցների և նույնիսկ առանձին լիկաշխատավորների միջև սոցմրցում կազմակերպելու մեթոդը:

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0035887



10